

✠

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Հ. ՅՈՎՍԵՓ Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Տարույս Ապրիլ 10-ին, Ձատկի վաղորդային մեկնույցի առաջին ժամանակացուն կնքեց Ուխտիս երեցազոյն անկամներէն Հ. Յովսէփ Վ. Մարգարեան: Ամսօրեայ հիւանդութենէ վերջէն, որուն ընթացքին համբերատար, երկինք ու արքայութիւն երազեց ու տենչաց, ու այնպէս ալ իր հոգեկիցներուն աղօթքին ու սիրոյն եւ ընդհ. Արքայօրօհութեան եւ խրատային մխիթարութեամբ, քաղաքէջ հիւանդանոցի մը մէջ ննջեց ու առ Աստուած փոխեցաւ: Տիւտ իր ծննդեան Տէրք. տարեդարձին:

Հանդուցեալը ծնած էր Տփլիս 1855-ի Ապրիլ 10-ին. հնգետասնամեայ հասակին — 1870 — Պետրոս վանք կը մտնէր եւ երեք տարի վերջ կը օնաւորելով կը կոչուէր Յովսէփ. հուսկ քահանայ կը ձեռնադրուէր 1878-ի Ձատկին, Ապրիլ 21:

Ամէն մխիթարեանի նման իր ալ կը թափան — զրական — ուսուցչական եւ առաքելական կեանքը կը սկսէր այդ ջրմանէն: 1879ին կը մտնէր Մուրատ-Ուփ. վարժարան, ուր հետզհետէ կը պաշտօնավարէր իրրեւ հակիչ, ուսուցիչ եւ ապա մատակարար մինչեւ 1885, երբ կը դառնար վանք տնտեսութեամբ եւ սպարանի պաշտօնէութեամբ. եւ երկու տարի յետոյ կը զրկուէր հայրենիք իր ծնողաց տեսութեան, եւ այդ տարիէն է որ կը սկսէր իր առաքելական պաշտօնը Ռուսաստանի Հայ կաթողիկէ հասարակութեան մէջ զանազան տեղեր շուրջ 23 տարի, այսինքն 1887-1909:

Իր առաքելութեան երկար եւ արդիւնաւատ կեդրոնը կ'ըլլայ իր ընտրի Սիմֆերոպոլը, ուր եկած էր Տփլիսէն 1891-ին եւ հոն կը մնար մինչեւ 1908:

Տեղւոյն Հայ կաթողիկէ հասարակութիւնը 600ի կը հասնէր. եւ ինք անոնց ունեւորներու օժանդակութեան շնորհիւ նախ նորոգեց ու բարեկարգեց եկեղեցին, մարմարակերտ աւազ խորանը, յետոյ ձեռնարկեց ծխական մարբութեան եւ հուսկ կը թափան սապարէզին՝ նոր կեանք եւ զարկ տալով ծխական դպրոցին:

Ողբ. Հայրը իր անձնական յուշերուն մէջ թողած է ամենուս ծանօթ ու ցաւալի վկայութիւնը. «Հայ ազգին նկարագրին ամէն ժամանակ եւ ամէն տեղ նոյնը եղած է, այս է՝ անմխիթանութիւն կամ լաւ եւս ըսել՝ նախանձ իրարու յառաջդիմութեան. եւ այս պոխտութիւնը հետեանք է դաստիարակութիւն շունենալու», ինչ որ երաւցնէ կը ստուգուէր, իր վկայութեամբ, Սիմֆերոպոլի ժողովրդեան մէջ, ուր կ'ըսէ թէ միջակ կամ աշխատաւոր դասակարգը կուրի մէջ էր հարուստներուն դէմ. եւ երկուքին միջեւ հաշտարար դեր պիտի կատարէր ուսեայ դասակարգը:

«Ժողովրդեանս այս վիճակը գտնելու վրայ չյուսահատեցայ, կ'ըսէ, այլ մանաւանդ երիտասարդական խանգով նախ զիմեցի առ Աստուած եւ իր օգնութեամբ կարողացայ մասամբ երկու կող-



մերու հաշտութեան ճամբայ բանալ, անխորաք վարուելով երկու կողմանց հետն ալ յարգանք եւ սէր ազգեցի վրանին»:

Եւ յերաւի իրմէ առաջ կարծես պահ մը անշքացած էր ծխական դպրոցը: Մինչ իր օրով, իր բարի հովուի անձնութեան օրինակէն քաջաբերած աջակիցներ ձրթօրէն կը փութան նուիրուիլ կրթական գործին՝ Անաստասիա եւ Կատարինէ Միրզայան՝ բարձրագոյն ուսումով եւ կրթութեամբ օժտուած, մարդասէր ու ազգասէր բոյրերը:

Վարժարանին աշակերտութիւնը 50-ի չափ էր եւ հոն խնամուածները կը յաջողէին մտնել պետական կրթարանի Բ-Դ դասարանները:

Բաց ի յիշեալ աղնուստիրտ քոյրերէն՝ ողբ. Հայրը իրեն օժանդակ կ'ունենար հայերէն լեզուի ուսուցման եւ եկեղեցական երաժշտութեան համար՝ Խաչատուր Խանպէկեան, նախկին Մխիթարեան սան:

Տնտեսական ձեւով ալ աշխատելով՝ կը յաջողէր աւելցնել եկամուտները նոր շինութիւններով եւ հանդէսներէ հաւաքուած գումարներով կը հոգար եւ կը զիւրացնէր աղքատ աղոց դաստիարակութիւնը:

Ողբ. Հօր տոաքելական եւ կրթական այդ երկարատեւ ու արդիւնալից գործունէութեան — 1891 1908 — մասին կարելի է տեսնել «Սիմֆերոպոլի Հայ կաթողիկէ եկեղեցւոյ համառօտ տեղեկու-

թիւն»ը. գործունէութիւն՝ զոր մեծապէս գնահատելով նաեւ Ազարեան կաթողիկոս 1901-ին յատուկ կոնդակով մը իրաւունք կու տար անոր Եպիսկոպոսական խոյր եւ հովուական դաւադան եւ մատանի կրելու, ինչպէս նաեւ լանջախաչ՝ զոր ինքն իսկ կոնդակին հետ կը զրկէր:

Ողբ. Հայրը 1908-ին կ'անցնէր Տփլիսու Հայ կաթողիկէներու առաջնորդութեան, եւ յաջորդ տարին վանք կը հրաւիրուէր ընդհանուր միաբանական ժողովի, որուն մէջ կ'ընտրուէր ընդհ. Մատակարար վանքին եւ Մուրատ-Ուփայէլեան վարժարանի կալուածներուն, վարելով այդ կարեւոր պաշտօնը մինչեւ 1916:

Յաջորդ չըջանին ալ՝ զրեթէ մինչեւ իր կեանքի վերջերը կը վարէր վանական կարեւոր պաշտօններ: 1916-1917 ընդհ. Գործակալ Ուխտիս ի Հոովմ. յետոյ քիչ մը ապա ընդհ. Աթոռակալ: 1920-1923 կը կարգուէր մեծաւոր Մուրատ-Ուփայէլեան վարժարանին, եւ ապա կը մնար Փատուայի մեր տան մէջ մինչեւ 1930: 1930-1932 կը վարէր Միւսուս մեր Ուսանողարանի մեծաւորութեան պաշտօնը եւ այդ թուականէն սկսեալ վանք կը քաշուէր հանդստեան:

Բաց ի զանազան ուղեւորութիւններէն յընթաց իր պաշտօնավարութեանց 1910-ին Կ. Պոլիս կ'երթար իրրեւ Այցելու տեղւոյն մեր վանատան եւ վարժարաններուն, ինչպէս 1913-ին ալ կ'երթար Սիմֆերոպոլ «ըստ հրաւիրանաց Սիմֆերոպոլի ժողովրդեան եկեղեցւոյ Յիսնամեայ յորեւրնի առթիւ»:

Իր բազմադրաց եւ շարժուն կեանքի ընթացքին՝ նա միշտ սիրահար եղաւ գեղարուեստին. զծագրողի իր ճարտարութեան ինչպէս եւ նկարչի զանազան գործեր կը մնան գեղեցիկ յիշատակ: Գեղարուեստէն զատ այնքան սիրող եւ հետապնդող էր ազգային մշակութային ուղղութեանց որ նոյն իսկ երբ մահէն առաջ խաւարը կը սպառնար իր աչքերուն, ինք անդադրում ընթերցողն էր եւ խորապէս գնահատող ազգային ամէն արժանիքի:

Մինչ փարող էր Ազգային ու Մխիթարեան գրական մեծ փառքերուն, իր գնահատումէն եւ փառարանումէն զատ նա յատուկ գուրգուրոտ սիրտ մ'ունէր նաեւ ներկայ գրական շարժումին եւ զայն մշակող սերունդին եւ մասնաւորապէս վանքի եւ ըրտասարդութեան, քաջալերելով եւ սրտապնդելով միշտ զանոնք:

Հանդերձ այնու որ քարոզչական եւ կրթական գործերը իր կեանքի նախնական եւ հասուն շրջաններն ամբողջ ծծեցին եւ սպառեցին, նա կը թողու անտիպ եւ տպագրուած քանի մը կարեւոր գործեր, ամէնքն ալ թարգմանութիւն՝ բաց ի իր կենսագրականէն. այսպէս ունի անտիպ՝ Յովհաննէս Պապիւրիէն՝ «Ս. Օգոստինոսի վարքը», եւ Լուիճի թոսթիէն՝ «Ս. Բենեդիկտոսի վարքը», երկուքն ալ թարգմանած խաւերէնէ: Իսկ Ֆրանսերէնէ թարգմանած է Ռուսաց կայսեր «Նիկողոս Բ. ի իր ընտանեաց եղբրական ֆակտագիրը» գրուած Pierre Gillard-է (տպ. Փարիզ 1929), որ նախկին սին (Peterhof 1909-1918 Ekaterinbourg): Իսկ ուսերէնէ թարգմանած է Պրոֆ. Մառի պատասխանը վրացի Ակակիա ժողովածուին. ВРАТСКАЯ ПОМОЩЬ = «Եղբայրական օգնութիւն» զրբէն:

Տպագրուած ունի կրկին թարգմանութիւններ ուսերէնէ. Վալերի Բրիւսովի «Հայ բանաստեղծութիւնը եւ իր նոյնութիւնը դարերու ըմբացին

մէջ» պատմադրական շատ հետաքրքրական տեսութիւնը. եւ նոյն հեղինակին «Տարեգրութիւն Հայ ժողովրդեան պատմական մակառաքին» գործը. երկուքն ալ իսկապէս շահեկան եւ Հայ ցեղի եւ անոր գրականութեան մասին ուղիղ եւ արժանաւոր գնահատական:

Երբ կը կնքենք մեր տողերը՝ յաւիտենական երջանկութիւն մաղթելով հանդուցեալի հոգւոյն, բոլոր միաբանակիցներու եւ բարեկամներու յարգանքի պատկերով, լաւագոյն պսակը օսկայն եւ Աստուծոյ ու մարդոց առջեւ գնահատելին իր իսկ զործն է եւ հաւատքի ամբողջութիւնը մանաւանդ որպէս կրօնաւորի եւ Աստուծոյ պաշտօնէի, եւ ահա ատոր ի նպաստ իր խոստովանողի վկայութիւնը:

Չանազան խնդիրներով՝ ուսս պետական հրամանագրներու կը սպասէր (1886-ին) որով կարենար մնալ Տփլիս հաւատացեալներու հովուութեան պաշտօնով. պետութիւնը մինչեւ իսկ արտաքսել կ'ուզէր զինք. այդ պարագաներուն, Կովկասի փոխարքայի խորհրդականներէն մին՝ որպէս թէ կացութիւնը փրկէր, կ'առաջարկէ ողբ. Հօր որ փոխ իր դաւանութիւնը՝ որուն ի վարձ գինքը յունադաւան եպիսկոպոս կը ձեռնադրեն՝ որպէս զի առաջնորդ ըլլայ բազմութեան մը ազգայիններու որոնք յունադաւան դարձած էին. զինք հրապուրելու համար մենագումար տարեթուակ մ'ալ կը խոստանային. 10,000 ռուպլի: — Բարեպաշտն Հայրը այս նախադրեալն առաջարկին վրայ գայ՝ րացած, ինչպէս ինք կ'ըսէ, կը պատասխանէր. «Ջարմամբ ընդ այսպիսի առաջարկութիւն մեր, եւ վիշտ մեծ է սրտիս զի դուք այդպէս խորիք գինէն, զի ես վասն պաշտաման կամ դրամական շահու աշնպէս թոյլ եմ վատ եղէց մինչեւ վաճառել զիսկով իմ եւ գիւտաւս... լաւ է ինձ կրել եւ տանել ամենայն մեղութեանց քան գուրացումս կաթողիկէ հաւատոյն»:

Ահա հարազատ տողերը հանդուցեալին, իր իսկ ինքնակենսագրականէն: «Հաւատք քո կեցուցին զքեզ» պիտի ըսենք, եւ ուրիշ ոչ մէկ մարդկային խորհրդածութիւն՝ իր դաւանաբեր աստուածային վսեմութեան եւ սրբութեան առջեւ:

Մահուան վաղորդային հանդուցեալ Հօր մարմինը վանք կը փոխադրուէր հիւանդանոցէն՝ ուր վախճանած էր, իր հոգեկից Հայրերու աղօթաւոր սպակիր թափօրով:

Ս. Պատարագէն յետոյ կը վերսկսէր յուղարկաւորութիւնը եւ թաղման կարգը վանքիս տաճարին մէջ, ի ներկայութեան ամբողջ Միաբանութեան Հայրերուն եւ աշակերտութեան, ազգայիններու, օտարազգի բարեկամներու եւ Մուրատ-Ուփայէլեան վարժարանի նախկին եւ ներկայ սաներու:

Ողբածայն երգերէ եւ սրտաուռ «ողջոյն»ներէն յետոյ կը տանէինք մարմինը թաղելու կղզեակին խորը մեր գերեզմանատան մէջ մեր նախկին Հայրերուն կից ուր երազած ու տենչացած էր ուժգին հանգչիլ առ յաւիտէ:

Արարողութիւնն աւարտած էր, ամէն ոք կը հեռանար սրբավայրէն, բայց կարծես խունկով եւ աղօթքով կնքուած թարմ շիրմէն գեռ կը լսուէին հանդուցեալին օրհնութիւնն եւ հայրական սրտադին յորդանները իր նորոնծայ միաբաններուն՝ հնազանդ եւ անձնանուէր կեանքի, ու մանաւանդ «Արքայութիւն»ը՝ զոր իր միակ փափաք կը պատասխանէր ամէն հարցումի:

ԽՄԲ.